

ՀԱՅՐ ՂԵՒՈՆԻ ԱԼԻՇԱՆԻ «ՊԼՊՈՒԽ ԱՒԱՐԱՅՐԻ» ՔԵՐԹՈՒԱԾԻ ԵՐԱԺԾՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԱԻՈՐՈՒՄՆԵՐԸ

Հայ բանասէր, պատմաբան, աշխարհագրագէտ, թարգմանիչ, Վենետիկի Միսիթարեան Միաբանութեան անդամ Հայր Ղեւոնդ Ալիշանը (1820-1901) գրական ասպարէզ իջաւ որպէս ինքնատիպ բանաստեղծ: Եւ պատահական չէ, որ նրա պօէզիան արժանացաւ հայ (Եւ ոչ միայն հայ) կոմպոզիտորների ուշադրութեանը:

Այսպէս՝ նրա «Բամբ որոտան» բանաստեղծութեան հիման վրայ Միսիթարեան միաբանութեան Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանի երաժշտութեան ուսուցիչ, իտալացի կոմպոզիտոր Պիետրոյ Բիանկինին (1828-1905)¹ «Վիթխարի անձնաւորութիւն մը, որ քեւ անձամբ միարան չեր ձեռնադրուած, սակայն հոգիով սրտով Միաբանութեան նուիրուած էր, եւ որու ծառայութիւնը Միսիթարեաններու երաժշտական աւանդութեան պահպանման ու մշակման գծով կրնաեթ յիրաւի անզուգական համարիլ», ստեղծեց մի ինքնատիպ հայրենասիրական երգ, որը յետագյում երգչախմբի համար բազմացայնեցին հայ երաժշտութեան երախտաւորներ Քրիստոփոր Կարա-Մուրզան, Կոմիտասը, Բարսեղ Կանաչեանը, Կարօ Զաքարեանը եւ այլք: Նրանց բազմաձայնած՝ ակտիւ համերգային կեանքով ապրած եւ լայն ժողովրդականութիւն վայելած խմբերգերը շրջանառուեցին երկու՝ «Բամբ որոտան» («Բամբ փորտան») եւ «Օնանդր առաջ» խորագրերով:

Մեր նպատակն է ներկայացնել երաժշտական ալիշանապատումի կարեւոր էջերից մէկը՝ կապուած Ալիշանի «Պլպուլն Աւարայրի» պօէմի երաժշտական մարմնաւորումների հետ:

1 ԻՒԹԻՒՃԵԱՆ ՀԱՅԿ, Թոռուցիկ ակնարկ մը Վենետիկի Միսիթարեան հայրենութեան էջերից մէկը՝ կապուած Ալիշանի «Պլպուլն Աւարայրի» պօէմի երաժշտական մարմնաւորումների հետ: 2017, 197:

«Բազմավիպի» 1847 թուականի հոկտեմբերի 1-ին համարի «Բանասիրականն» բաժնում «Բանաստեղծութիւն» խորագրի տակ հրատարակւում է 27-ամեայ Ալիշանի «Պլպուլն Աւարայրի» պօէմը՝ «Նահապետ» հեղինակով²: Դրանից ամիսներ առաջ՝ «Բազմավիպի» նոյն թուականի յունիսեան համարում տպագրուել էր երիտասարդ բանաստեղծի «Հայոց աշխարհիկ» բանաստեղծութիւնը: Հէնց այդ երկու ստեղծագործութիւնների շնորհիւ Ալիշան-Նահապետը լայն ճանաչում ստացաւ եւ ձեռք բերեց բանաստեղծի հոչակ:

«Բազմավիպ»ում «Պլպուլ»ի հրատարակումից ընդամենը մէկ տարի անց՝ 1848 թուականի յունիսին հայ դրամատուրգ, թատերական գործիչ Մրապիոն Հէքիմեանը գրեց «Առ Ղետնի Ալիշան» ներողական բանաստեղծութիւնը՝ Ալիշանին դիմելով որպէս հանրաճանաչ բանաստեղծի, որպէս «մտաց կարապետի», որին պէտք է հետեւեն եւ որին պէտք է ընդօրինակեն ուրիշները: «Հազիւ մէկ տարի անց նոյնպիսի խօսքերով նրան պէտք է դիմեր Մկրտիչ Պէշիկ-բաշլեանը: Յետագայ գործերը եւ մանաւանդ «Յուշիկի հայրենեաց հայոց» պատմագեղարուեստական արձակ ստեղծագործութիւնը եկաւ վերջնականապէս գրական բարձրակէտ ապահովելու Ալիշանի համար»³:

Անդնահատելի է այն նշանակութիւնը, որն ունեցաւ «Պըլպուլ»ը Հայր Ղեւոնդ Ալիշանի գրական-ստեղծագործական ճակատագրում:

Երիտասարդ բանաստեղծի մտքով չէր կարող անցնել, որ իր «Պլպուլ»ը շարունակելու է կեանքը նաեւ որպէս խմբերգ եւ ապրելու է իր մահից շատ տարիներ ու տասնամետակներ անց՝ հասնելով ընդհուպ մինչեւ իր ծննդեան 200-ամեայ յոբելեանը:

1899 թուականին Թիֆլիսում հրատարակուող «Թատրոն» գրական եւ թատերական հանդէսի 2-րդ համարի «Երաժշտական յաւելուած» բաժնում տպագրում է հայ երաժշտութեան դասական, կոմպոզիտոր, խմբավար եւ մանկավարժ, Պետերուրդի կոնսերուատորիայի շրջանաւարտ Մակար Եկմալեանի (1856-1905) «Պլպուլն Աւարայրի» խմբերգը՝ գրուած Ղ. Ալիշանի խօսքերով:

2 Տե՛ս ՆԱՀԱՊԵՏ, Պլպուլն Աւարայրի, ի Բազմավիպ. օրագիր բարոյական, բանասիրական, տնտեսական եւ բնական գիտելեաց, 1847, թիւ 19, հոկտեմբեր, 1, 295-300:

3 ՇՏԻԿԵԱՆ Ս., Ալիշանը հայ մտաւորականների յուշերում, ի Լրաբեր հաւարական գիտութիւնների, 1987, N 6, 41:

Խմբերգում կոմպոզիտորն օգտագործել է պօէմի 25-ից 28-րդ սողերը.

Ո՞հ դու բարեկամ այրած սրտերու,
Խօսնակ գիշերոյ հոգեակ վարդերու,
Երգէ պըլապուլիկդ, երգէ ի սարեկ
Զանմահ քաջբն Հայոց երգէ հոգւոյս հետ:

Նշենք, որ Եկմալեանը «իր քնարեն ի սպաս դրեց ազգային ազատագրական պայքարի գաղափարախօսութեան արտայայտմանը։ Դրանով պէտք է բացատրել այն, որ նա իր ստեղծագործութիւնների համար ընտրել է այդ գաղափարախօսութիւնն արտայայտող բանաստեղծների՝ Ռ. Պատկանեանի, Մ. Պէշիկրաշլեանի եւ Ղ. Ալիշանի բանաստեղծութիւնները, որոնց մեծ ժողովրդականութիւն էին վայելում հայ ժողովրդի ամենալայն խաւերում»⁴:

Մ. Եկմալեանի խմբերգը կարեւոր դեր ունեցաւ կոմպոզիտորի ստեղծագործութիւնները, յատկապէս Ռ. Պատկանեանի, Մ. Պէշիկրաշլեանի, Ղ. Ալիշանի եւ այլ բանաստեղծների խօսքերով գրուած մենարգերն ու խմբերգերը, որոնց մէջ բաւական ցայտուն կերպով արտայայտուել են հայրենասիրական ու ազատամիրական գաղափարներ, ժամանակին մեծ տարածում գտնելով, զգալի դեր են կատարել հայերի ազգային ինքնագիտակցութեան բարձրացման ուղղութեամբ»⁵:

1905 թուականի մարտի 6-ին կտրուեց 49-ամեայ Մակար Եկմալեանի կեանքի թելլ... Մոռացութեան գիրկն անցաւ «Պըլպուն Աւարայրի» խմբերգը...

Հայ խմբերգային արուեստի՝ մասնաւորապէս «Պլպուն Աւարայրի» Եկմալեանական խմբերգի համերգային կենսագրութեան մէջ կարեւոր հանդրուան դարձաւ 1963 թուականը. յունիսի 2-ին Հայկական պետական ֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում, Կ. Պոլսից եկած եւ Երեւանում մշտական բնակութիւն հաստատած երիտասարդ դիրիժոր Յովկաննէս Զէքիչեանի ակտիւ մաս-

4 ՄՈՒՐԱԴԵԱՆ Մ., Հայ երաժշտութիւնը XIX դարում եւ XX դարասկզբում, Երևան 1970, 264:

5 Անդ, 276:

նակցութեամբ կազմակերպվեց Մակար Եկմալեանի ստեղծագործութիւններից կազմուած համերգը, որի առաջին բաժնում, տաղանդաւոր խմբավարի ղեկավարութեամբ, Հայաստանի պետական երգեցիկ խմբի կատարմամբ հնչեցին նրա խմբերգերը՝ «Ո՛վ, հայոց աշխարհ», «Պլպուլն Աւարայրի», «Ողոյն տուէֆ», «Խորոտ աղջիկ» եւ «Ահա ծագեց կարմիր արեւ», ինչպէս նաեւ հատուած «Իոզայի քափառումները» կանտատից, իսկ երկրորդ բաժնում՝ «Կիլիկիա», «Կեցցէ՛ Զեյթուն»⁶, «Տէր, կեցն դու զիայս», «Թաղումն քաջորդույնն», «Լոեց» (մենակատար՝ Շարա Տալեան)՝⁷:

Մա հայաստանեան բեմում Եկմալեանի ստեղծագործութիւններից կազմուած առաջին համերգն էր, որի ընթացքում առաջին անգամ հնչեցին անյատ գործեր՝ արժանանալով ունկնդիրների խանդավառ ընդունելութեանը: “*Коммунист*” թերթի 1963թ. յունիսի 8-ի համարում լրյու տեսած «Վերածնուած Եկմալեանը» վերտառութեամբ յօդուածում արձանագրուեց, որ «Եկմալեանի առաջին համերգը յիրաւի հրաշալի իրադարձութիւն է հանրապետութեան մշակութային կեանելում»⁸:

Վ. Մաթեւոսեանը «Երեւան» թերթի 1963 թուականի յունիսի 5-ի համարում տպագրուած «Եկմալեանի երգերի երեկոյ» վերլուծականում նկատեց, որ Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում հաւաքուած բազմաթիւ երեւանցիներ «մեծ սիրով և ուշադրութեամբ լսեցին Երեւանում դեռևս չկատարուած Եկմալեանի մի շարք պարզ ու անպահոյն ստեղծագործութիւններ»⁹:

Ու թէեւ համերգի կազմակերպման գործում մեծ դեր էր կատարել երգիչ Շարա Տալեանը, ով նաեւ հանդէս եկաւ վարպետ կատարումներով, սակայն «ծրագրի հիմնական ծանրութիւնն իր վրայ վերցրեց Հայաստանի պետական երգչախումբը, որը դեկավորում էր Ցովհաննելս Զեֆիրանը»¹⁰:

Մեծ յաջողութիւն ունեցած համերգը կրկնուեց նոյեմբերի 30-ին:

6 Ծրագրում գրուած է «Զէյթունցիմերի երգը»:

7 Տե՛ս «Գրական թերթ», 8 դեկտեմբերի, 1963:

8 ГАЛСТЯН Х., *Возрожденный Екмалин*, “Коммунист”, 8 июня, 1963.

9 ՄԱԹԵՒՈՍԵԱՆ Վ., Եկմալեանի երգերի երեկոյ, «Երեւան», 5 յունիսի, 1963:

10 Անդ:

Այս երկու համերգների շնորհիւ վերածնուեց Մակար Եկմալեանի խմբերգային երաժտութիւնը, այդ թւում՝ «Պլպուլն Աւարայրի», խմբերգը, որն այնուհետեւ պիտի հնչէր միշտ՝ Հայաստանում եւ նրա սահմաններից դուրս:

Փարիզի Շառլ Գրոյի անուան ձայնասկաւառակների ակադեմիայի ամենամեայ միջազգային մրցանակաբաշխութեան 1970 թուականի «Գրան պրին» (Մեծ մրցանակը) շնորհուեց Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբին՝ «Հայաստանի երգեր» ձայնասկաւառակի համար, որտեղ տեղ էին գտնել Կոմիտասի «Գուրանի երգը», «Կալի երգը», «Հարասնեաց երգերը», Մ. Եկմալեանի «Պլպուլն Աւարայրի», «Մեր հողը հենաւանդ» եւ այլ ստեղծագործութիւններ, «որոնք կատարել է Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը՝ հանրապետութեան ժողովրդական արտիստ Յ. Զեֆիշեանի դեկանի դուռը»¹¹: Մեծ մրցանակի էր արժանացել նաեւ Դուռըժակի կոնցերտի՝ Մստիսլաւ Ռոստրոպովիչի եւ Հերբերտ Փօն Կարայեանի ձայնագրութիւնը¹²:

Նոյն՝ 1970 թուականին «Պլպուլն Աւարայրի» խմբերգն առաջին անգամ տպագրուեց Հայաստանում. ՀՍՍՀ ԳԱ արուեստի ինստիտուտը, Ռոբերտ Աթայեանի խմբագրականով¹³ ու Մաթեւսոս Մուրադեանի առաջաբանով¹⁴ հրատարակեց Մակար Եկմալեանի աշխարհիկ ստեղծագործութիւնների «Խմբերգեր եւ մեներգեր» ժողովածուն¹⁵, որը կազմել էին Շարա Տալեանը, Մաթեւսոս Մուրադեանը եւ Ռոբերտ Աթայեանը: Ժողովածուն ընդգրկում էր հայ ժողովրդական երգերի՝ Եկմալեանի մշակումները եւ կոմպոզիտորի ինքնուրոյն երկերը, այդ թւում՝ «Պլպուլն Աւարայրի» խմբերգը¹⁶:

11 Միջազգային մրցանակ «Հայաստանի երգերին», «Սովետական Հայաստան», 26 ապրիլի, 1970:

12 Տե՛ս Նուաթել եւ «Մեծ մրցանակը», ի «Հայրենիքի ճայն», 29 ապրիլի, 1970: Նկատնեմ, որ նոյն կարգի մրցանակի էր արժանացել Ս. Պրոկոփեևի «Հոկտեմբերի 20 տարին» ստեղծագործութեան այնասկաւառակը, իսկ Երկրորդ կարգի Մեծ մրցանակ էր շնորհուել Սվիրիդովի երգչախմբային եւ Գլիմակալի սիմֆոնիկ ստեղծագործութիւնների ճայնասկաւառակներին:

13 ԱԹԵՅԵԱՆ Ռ., Խմբագրի կողմից, Մակար Եկմալեան, Խմբերգեր եւ մեներգեր, Երեւան, «Հայաստան», 1970, 4-7:

14 ՄՈՒՐԱԴԵԱՆ Մ., Մակար Եկմալեան. Կենսագրական ակնարկ, Մակար Եկմալեան, Խմբերգեր եւ մեներգեր, Երեւան, «Հայաստան», 1970, 8-10:

15 ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼԵԱՆ, Խմբերգեր եւ մեներգեր, Երեւան, «Հայաստան», 1970:

16 Անդ, 89, ծան.՝ էջ 126:

ի տարբերութիւն «Թատրոն» հանդէսում տպագրուած խմբերգի
Cis-dur տոնայնութեան, այստեղ տոնայնութիւնը F-dur է եւ մէկ
քառատողի փոխարէն՝ ալիշանական տեքստից ընդգրկուած է գ
քառատող:

Անշուշտ՝ սա եւս նպաստեց խմբերդի տարածուածու ու չելի դարձրեց միւս խմբավարների մեկնաբանութիւնների համար եւս:

Եւս: Ու թէեւ խմբերդը կատարել են հայ խմբավարներից շատերը, եւ այն մերթընդմերթ տեղ է գտել հայկական երգչախմբերի երգացանկերում, սակայն, այդուամենայնիւ, «Պապուլի» վերածնմանն ու հայրենիքում եւ ամբողջ աշխարհում հանրահռչակմանը նոր շունչ հաղորդեց Զէքիջեան-խմբավարի գործունէկութիւնը:

Շնորհիւ Յ. Զէքիջեանի՝ Մ. Եկմալեանի խմբերգայիս ուշ-
ժնորհիւ Հասաւ Ֆրանսիա. Կոմպոզիտորի աշխարհիկ խըլք-
ժըլատութիւնը հասաւ Ֆրանսիա. Առաջնահարացին, ու «Պատարագից» հա-
յերգերը, այդ թուում՝ «Պլառուն Աւարայրի», ու «Պատարագից» հա-
տուածները Փարիզում եւ Մարսելում հնչեցին Յ. Զէքիջեանի եւ
հայկական կապելլայի 1986 թուականի Փրանսիական հիւրախա-
ղերի ընթացքում։ Յատկանշական է, որ Հայր Ղետոնդ Ալիշանի-
բանաստեղծութեան երաժշտական մարմնաւորումը՝ Եկմալեանա-
բանաստեղծութեան երաժշտական մարմնաւորումը՝ հնչեց
կան խմբերգը Մաեստրոյ Զէքիջեանի մեկնաբանութեամբ հնչեց
Փարիզում 1986 թ. սեպտեմբերի 30-ին տեղի ունեցած համերգի
առաջին բաժնում¹⁷. Հնչեց այն նոյն Փարիզում, որտեղ աւելի քան
մէկ դար առաջ՝ 1859-1861 թթ. Հայր Ղետոնդ Ալիշանն ուսուց-
չութիւն էր արել Փարիզի Մուրատեան վարժարանում։

մէկ դար առաջ 1857 թվականին հայոց գործադրութեան մէջ պատճեն էր արել Փարիզի Մուլտատեան վարժարանում։ Հունական էր արել Փարիզի Մուլտատեան վարժարանում։ Այսպիսով, Հայր Ղեւոնդ Ալիշանի «Պլպուլն Աւարայրի» պօէտի մէկ հատուածի հիման վրայ խառը երգչախմբի համար գրուած էկմալեանական այս ա cappella խմբերգը դարձաւ հայ խմբերգային արուեստի ուղենչային ստեղծագործութիւններից մէկը, որը չնորա հիւ Յ. Զէքիջեանի՝ արդէն տասնամբակներ շարունակելով իր համբային կեանքը, վաղուց արդէն դարձել է Մասսարոյ Յովհաննէ Զէքիջեանի եւ հայկական կապելլայի այցեքարտերից մէկը։

Բոլորովին վերջերս՝ 2021թ. փետրուարի 17-ին, Արևա և
Համերգասրահում կայացաւ Հայաստանի ազգային ակա-
դեմիական երգչախմբի համերգը՝ նուիրուած Արցախեան պատե-
րազմում զոհուածների յիշատակին: Համերգն սկսուեց Մ. Եկմա-
յականի «Հայր մեր» Տէրունական աղօթքով, որին յաջորդեց Առնօ

¹⁷ Տես Համբորգի ծրագիրը, (Յ. Զելիչևանի անձնական արխիվ):

Բարաջանեանի «Տղարքը, որոնք չկան» խմբերդը: Իսկ երրորդը՝ «Պապուն Աւարայրի» խմբերդն էր...

Միեւնոյն ժամանակ պիտի ափսոսանքով արձանագրենք, որ
մինչ օրս Յովհաննէս Զէքիջեանի մեկնաբանութեամբ աշխարհի
տարբեր երկրների հեղինակաւոր համերգային դահլիճներում հըն-
չած այս հրաշալի խմբերգը՝ ալիշանական «Պլպուլ», դեռևս չի
հնչել վենետիկում՝ Հայո Ղեւոնդ Ալիշանի հարազատ օջախում,
մարդկան կողմէ վենետիկի Միհթարեան Միաբանութեան կա-
մարների ներքոյ...

Նման ճակատագիր ունեցաւ նաև «Իրական ալօգար»-ը.
Մերին է յայտնի այս ժողովրդական երգը, բայց բոլորը չէ, որ
տերեն, թէ ո՞վ է բանաստեղծական տեքստի հեղինակը: Իսկ բա-
գիտեն, թէ ո՞վ է բանաստեղծական Աւետիք իսահակեանն է...
նաստեղծութեան հեղինակն Աւետիք իսահակեանն է...

Ինչեւէ... Նոյն ճակատագրին արժանացաւ նաեւ Մ. Եկմալեանի «Պլպուլն Աւարայրի» խմբերգը, որի «Հնորհիւ» ստեղծուեց կոմպոզիտոր եւ խմբավար, Պետքրուրդի կոնսերուատորիայի շըրջանաւարտ Գրիգոր Սիւնիի (1876-1939) «Ո՛հ, դու քարեկամ (Պլպուլն Աւարայրի)» ա cappella խմբերգը: ՀՀ ԳԱԱ արուեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ 2013 թուականին լոյս տեսաւ Գրիգոր Սիւնիի «Խմբերգեր» ժողովածուն, որը կազմել էր եւ խմբագրել Ռոբերտ Աթայեանը, ով նաեւ հեղինակել էր նախարանն ու վերլուծական գիտողութիւնները: Ժողովածուի «Հայրենասիրական եւ ազգային-ազատագրական պայքարի երգերից» բաժնում տեղ է գտել «Ո՛հ, դու քարեկամ (Պլպուլն Աւարայրի)» վերնագրով աcappella խմբերգը¹⁸: Ծանօթագրութեան մէջ կարդում ենք, որ խմբերգը «հատուած է Ղ. Ալիշանի շերմ հայրենասիրութեամբ եւ ազգային ազատագրութեան գաղափարով տողորուած «Պլպուլն Աւարայրի» բերքուածից, որ անցեալ դարի կեսերից սկսած հայ ժողովրդի տարրեր խաւերում երգուել ու մինչեւ այժմ էլ երգուում է: Շատ հայ կոմպոզիտորներ եւ խմբավարներ (դրանց թւում նաև մեր օրերի) անտարրեր չեն անցել այս ժողովրդական երգի կողքով: Սիւնիի ներդաշնակումը իւրովի գունեղ է եւ յուզական»¹⁹: Ինչպէս տեսնում ենք՝ այստեղ երգը համարում է ժողովրդական, ինչը, մեր կարծիքով այնքան էլ չի համապատասխանում իրականութեանը: Եթէ համեմատենք Եկմալեանի եւ Սիւնիի խմբերգերը, ապա կը յայտնաբերենք շատ ընդհանրութիւններ եւ չնչին տարբերութիւններ: Հետեւաբար՝ կարող ենք պնդել, որ Սիւնին ոչ թէ բազմաձայնել է ժողովրդական երգը, այլ մշակել Եկմալեանի խմբերգը, քանի որ ընդհանրուր են ոչ միայն տոնայնութիւնները՝ F-այր, այլեւ հիմնական ձայնատարութիւննը: Սիւնին փոքր-ինչ աշխուժացրել է ալտի եւ տենորի երգամասերը, իսկ բասի երգամասը լիովին համընկնում է Եկմալեանական խմբերգի բասային երգամասի հետ:

Եկմալեանական «Պլպուլ»ը մարմնաւորուեց գործիքային երաժշտութեան մէջ եւս: 1974 թ. Ալեքսանդր Ցարութիւննեանը դաշնամուրի, լարային նուագախմբի եւ հարուածայինների համար ստեղծում է «Մեր հին երգերը» ռապսողիան, որը, ըստ հեղինակի, «հիմնուած պիտի լինէր 19-րդ դարի վերջին տարածուած հայկական

18 Գրիգոր Սիւնի, Խմբերգեր, գիտական հրատարակություն ըստ բնագրերի, կազմող, խմբագրող, նախարանի և վերլուծական դիտողութիւնների հեղինակ՝ Ռոբերտ Աթայեան, Երևան, «Հայաստան», 2013, 220:

19 Ա.նդ., 326:

հայրենասահիրական երգերի նիւթի վրայ: Իմ նոր ռապտողիան անուանեցի «Մեր հին երգերը՝» դրանով իսկ տուրք տալով վաղուց անցած ժամանակներին: Այդպէս է լինում, երբ թերթում և հին լուսանկարներով ալրումը, որի մէջ պահպանում են սրտիդ մօս ու թանկագին մարդկանց լուսանկարները, մարդիկ, որ ապրել են իրենց անկրկնելի կեաները²⁰:

Ռապտողիան առաջին անգամ հնչեց Երեւանում, 1974 թուականին, Ֆիլհարմոնիայի մեծ դահլիճում, Դաւիթ Խանջեանի ղեկավարութեամբ։ Դաշնամուրի նուագամասը կատարեց ինքը՝ հեղինակը։ 1990 թուականին Ռապտողիան հնչեց Փարիզում «Գաւոյ» հեղինակաւոր համերգասրահում (Salle Gaveau), հեղինակի եւ Հայաստանի կամերային նուագախմբի կատարմամբ՝ Ռուբէն Ահարոնիանի ղեկավարութեամբ²¹։

իր ռապսոդիան Յարութիւնեանն սկսում է նուագախմբում եկմալեանական «Պլպուլի» մեղեղու շարադրմամբ²², որը, ինչպէս նկատել է արուեստագիտութեան թեկնածու Վայենսլաւ Եղիգարեանը, «ռապսոդիայում օժտում է Հայրենիքի թեմայի կերպարով եւ հասնում սիմֆոնիկ բնդիանացման մակարդակի»²³:

Ալիշանեան «Պլազուլին» է անդրադարձել սփիտռքահյա կոմպոզիտոր եւ խմբավար Գուրգէն Ալէմչահը (1907-1947): Ծննդավայրում՝ Պարտիզակ գիւղաքաղաքում ստանալով նախնական կըրթութիւն՝ նա մեկնել է Վենետիկ եւ ուսանել Մուրադ-Ռաֆայէլեան վարժարանում: Երաժշտական կրթութիւն ստանալու նպատակով 1923-ին նա մեկնել է Միլան, 1930 թուականին աւարտել է Միլանի կոնսերուատորիան եւ նոյն թուականին հրաւիրուել Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանի՝ Փարիզի նորաբաց բաժնունք՝ որպէս երաժշտութեան դասասոլ²⁴: «Դասաւանդութեանը գուգընք՝ որպէս երաժշտութեան դասասոլ»՝ Ալիշանեանը անունը: Այդ երգչախմբով համերգներ է տալիս ոչ միայն «Կիլիկիա» անունը: Այդ երգչախմբով համերգներ է տալիս ոչ միայն Փարիզում ու Արա մօտակայ շրջաններում, այլև մի քանի անգամ մեկնում է Վենետիկի²⁵:

²⁰ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ Ա., Յուշեր, Երևան, «Արել» հրատ., 2000, 81:

21 КОКЖАЕВ МИХАИЛ, Александр Арутюнян: особенности композиторского стиля. Москва. «Композитор», 2006, 151.

²² Ըստ, Խօս, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԵՎՈՒԹՅՈՒՆ», 1988, 3:

23 ЕДИГЯРЯН ВЯЧСЛАВ, Рапсодия «Наши старые песни» в ракурсе формально-стильного анализа. *Арутюнян*, Ереван, «Комитас», 2004, 14.

²⁴ ԲՈՒՀՏԵԼԻՆ Յ.: *Ահեղքահայ երաժշտական մշակույթը*, Երևան 1982, 283:

25 U.Gn., 283-284:

Հայ երաժշտագիտութիւնը մինչ օրս առանձին քննութեան առարկայ չի դարձրել վաղամեռիկ տաղանդաւոր կոմպոզիտորի ստեղծագործութեան ուսումնասիրութիւնը, թէեւ նրա արխիւլ նրա մահից յետոյ տեղափոխուել է Երեւան եւ հանգրուանել Ե. Զարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանում։ Նրա կեանքին ու գործունէութեանն անդրադարձել է Երկար տարիներ սփիւռքահայ երաժշտութեան ուսումնասիրութեան հարցերով զբաղուած երաժշտագէտ Յիշիլիա Բրուտեանն իր «Սիփիւռքի հայ երաժիշտները» (1968) եւ «Սիփիւռքահայ երաժտական մշակոյքը» (1982) մենագրութիւններում։ Անդրադառնալով ընդամէնը 40 տարեկանում կեանքից հեռացած կոմպոզիտորի ստեղծագործութեանը, նա նշում է, որ կոմպոզիտորի «ամենանշանաւոր գործն է «Աւարայրի պատերազմը» վոկալ-սիմֆոնիկ երկը, որը խոշոր կտակի գործ է՝ գրուած 1934»²⁶։ 2001 թուականին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակած «Վարդանանց երգեր եւ շարականներ» ժողովածուում, որը նույիրուած էր Վարդանանց 1550-ամերակին եւ հրատարակուեց Միհրան Ղազելեանի խմբագրութեամբ, տպագրուեց Գուրգէն Ալէմշահի «Պլպուլն Աւարայրի» a cappella խմբերգը խառը երգչախմբի համար²⁷, որն, ի տարբերութիւն Եկմալեանական խըմբերգի լուսաւոր տրամադրութեան, շարագրուած է մինորում բնական g-moll-ում եւ ստեղծում է բոլորովին նոր երաժշտական կերպար։

Այսպիսով՝ Ալիշանի «Պլպուլն Աւարայրի» պօէմը կարեւոր դեր կատարեց հայ երաժշտութեան պատմութեան մէջ՝ իր վրայ հրաւիրելով հայ կոմպոզիտորների ուշադրութիւնը թէ՛ բանաստեղծի կեանքի օրօք, թէ՛ նրա մահից յետոյ։ 1899-ին Եկմալեանը ստեղծեց «Պլպուլն Աւարայրի» a cappella խմբերգը խառը երգչախմբի համար, իսկ տարիներ անց՝ սփիւռքահայ կոմպոզիտոր Գուրգէն Ալէմշահը՝ «Պլպուլն Աւարայրի» a cappella խմբերգը խառը երգչախմբի համար։

Մ. Եկմալեանի «Պլպուլն Աւարայրի» խմբերգը, չնորհիւ Յովհաննէս Զէքիջեանի, 1963-ին առաջին անգամ հնչեց Երեւանում, հաստատուն տեղ գրաւելով Հայաստանի ազգային ակադեմիական

26 ԲՐՈՒՏԵՍԻՆ Ց., Սիփիւռքի հայ երաժիշտները, Երեւան 1968, 59:

27 ԱԼԷՄՇԱՀ ԳՈՒՐԳԷՆ, Պլպուլն Աւարայրի, Վարդանանց երգեր եւ շարականներ, խմբագրութեամբ Միհրան Ղազելեանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2001, 190-192:

2020 ԱԼԻՇԱՆԻ «ՊԼՊՈՒՆԱԿԱՆ ԱԽԱՐԱՅՐԻ»Ի ԵՐԱԺԾՏԱԿԱՆ ՄԱՐՄԱՆԻՐՊԻՄՆԵՐԸ 201

ԵՐԳՀՅԱԽՄԲԻ ԵՐԳԱԳանկում: Այն մինչ օրս էլ ապրում է լիարժեք համերգային կեանքով՝ հնչելով՝ Հայաստանում եւ արտասահմանում:

Եկմալեանական «Պլպուլը» հիմք դարձաւ նոր ստեղծագործութիւնների համար. Գրիգոր Սիւնին ստեղծեց «Ո՛հ, դու բարեկամ (Պլպուլն Աւարայրի)» վերնագրով a cappella խմբերգը, իսկ Ալեքսանդր Յարութիւնեանի շնորհիւ այն մուտք գործեց գործիքային երաժշտութիւն: Կոմպոզիտորը եկմալեանական մեղեղին վարպետորէն օդտագործեց իր «Մեր հին երգերը» ռապսոդիայում:

ԱՆՆԱ Ա.ՍԱՏՐԵԱՆ

Summary

MUSICAL EMBODIMENTS OF FR. GHEVOND ALISHAN'S “THE NIGHTINGALE OF AVARAYR”

ANNA ASATRYAN

Key words – Father Gevond Alishan, “*The Nightingale of Avarayr*”, Makar Yekmalyan, choral a capella pieces for mixed choir, Gurgen Alemshah, Ohannes Tchekidjian, Grigor Syuni, Alexander Harutyunyan, “*Our Old Songs*”.

The Armenian linguist, historian and translator, member of the Mkhitarist Congregation, Father Ghevond Alishan (1820-1901) stepped into the literary world as a unique poet. Quite unexpectedly, his poetry drew the attention of Armenian, as well as other composers.

The poem “*The Nightingale of Avarayr*” (1847) by Alishan has played an important role in the history of Armenian music. Armenian composers addressed the poem both during Alishan's lifetime and after his death, having created choral a capella pieces for mixed choir. The classic of Armenian music Makar Yekmalyan (1856-1905) wrote a choral work “*The Nightingale of Avarayr*” in 1899, and years later, Kurken Alemshah (1907-1947) addressed the same poem.

The choral piece by M. Yekmalyan “The Nightingale of Avarayr”, that had fallen into oblivion after the composer's death, was brought back to life in 1963 thanks to the efforts of the young conductor Ohannes Tchekidjian. After the Yerevan debut, “*The Nightingale of Avarayr*” has taken its solid place in the repertoire of the National Academic Choir of Armenia, and to date, it lives a full-fledged concert life, having become one of the signatures of Maestro Tchekidjian and the Armenian Capella.

Yekmalyan's “*Nightingale*” paved the way for new musical pieces. Thus, Grigor Syuni wrote an a capella choral work, while owing to Alexander Harutyunyan, the “*Nightingale*” became part of instrumental music: the composer used the tune of Yekmalyan's “*Nightingale*” in the prelude to his rhapsody “*Our Old Songs*” (1974).